

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 201

Հաւատացեալներ կարող են մոլորուն եւ ընկնեն լուրջ մեղքերի մէջ – Թէկուզ յարատեւութեան վարդապետութիւնը հաստատում է թէ ճշմարիտ հաւատացեալները նրանք են որոնք անպայման կ'յարատեն մինչեւ վերջը, սակայն այն չի ուսուցանում որ նրանք երբէք չեն ընկնի մեղքի մէջ, նոյնիսկ լուրջ մեղքի մէջ: Աստուածաշունչը բացայայտօրէն սովորեցնում է որ հաւատացեալներ մեղանջում են, հաւատքից ապստամբում են, եւ նոյնիսկ կարող են (հնարաւորութիւնը ունեն) ընկնելու եւ էլ ընկնում են խիստ (ծանր) մեղքերի մէջ: Մենք կարող ենք նայել Դաւիթի եւ Պետրոսի կեանքերին որպէս սրա դասական օրինակներ (Բ. Թագաւորաց 11:1-4, 12:9, Մատթէոս 26:56, 69-75): Ուէստմինստըրը Հաւատոյ Հանգանակը նշում է թէ հաւատացեալներ կարող են ընկնել սաստիկ մեղքերի մէջ «Սատանայի ու աշխարհքի փորձանքների միջոցով, իրենց մէջ մնացած պղծութեան ազդեցութեամբ» (Գլուխ 17, Բաժին 3): Երբ հաւատացեալներ անհոգ ու անփոյթ են գտնուում շնորհաց միջոցների պատշաճ օգտագործման վերաբերեալ, նրանք իրենց թշնամիների համար հեշտ որս են դառնում:

Հանգանակը նշում է թէ երբ մենք մեղանջում ենք եւ շարունակում ենք դրա մէջ մենք կրում ենք Աստուծոյ դժգոհութիւնը (տհաճութիւնը)՝ այսինքն գալիս են Նրա բարկութեանը տակ: Այս անհաւատացեալների դէմ եղած Աստուծոյ պատժական (հատուցանիչ) բարկութիւնը չի, այլ այն Աստուծոյ ուղղիչ բարկութիւնն է՝ որը վերապահած է Իր գաւակների համար որոնք ընկնում են մեղքի մէջ, որի նպատակն է առաջնորդել նրանց դէպի սրբութեան (Յոբ 5:17-18, Առակաց 3:11-12, Եսայիա 54:8, Եբրայեցիս 12:5-11): Նաեւ Հանգանակը նշում է թէ երբ մենք մեղանջում ենք մենք տրտմեցնում ենք Սուրբ Հոգուն (Եփեսացիս 4:30, Ա. Թեսաղոնիկեցիս 5:19): Մեր մեղքը չի կարող ազդել կամ գրգռել Աստուծուն ունենալու տրամադրութեան տատանումներ՝ այսինքն, բարկանալ կամ հիասթափել. փոխարէն, մեր շարունակաբար մեղանջելով մենք հեռանում ենք (մեզի շրջում ենք) Աստուծոյ օրհնութիւններից, ամրապնդումից, եւ վստահութիւնից. ինչպէս որ Հանգանակը հռչակում է թէ հաւատացեալները «որոշ չափով գրկւում են իրենց շնորհքներից ու սփոփանքներից, իրենց սրտերը խտացրած են, եւ իրենց խղճմտանքները վիրաւորւած»: Դաւիթը այս վիճակը լաւ գիտէր (Մաղմոս 51:8, 10-12): Աստուածաշունչում սրտի խտութիւնը միայն անհաւատների մի նկարագրութիւնը չի, այլ այն նաեւ խօսում է հաւատացեալների առթիւ, որոնք մոլորում են Աստուծոց ու Նրա ճշմարտութիւնից (Մարկոս 6:52, 16:14):

Հաւատացեալի համար այս կացութեան մէջ լինելը մի շատ վնասակար եւ վտանգաւոր վիճակ է: Հաւատացեալի խիղճը մեղքից վիրաւորում է, դատելով նրան իր մեղքերի համար. եւ ինչքան աւելի նա շարունակի անիրաւութեան ճանապարհում, այնքան աւելի նրա խիղճը կ'տկարանայ, եւ նրա սիրտը կ'դառնայ աւելի յամառ Աստուծոյ դէմ (Մաղմոս 81:10-12, Մաղմոս 32:3-4, 38:1-4, Առակաց 28:14, Ա. Տիմոթէոս 1:18-19): Հանգանակը նշում է որ այս վիճակում հաւատացեալներ «ցաւացնում եւ գայթակղեցնում են ուրիշներին, եւ ժամանակաւոր դատողութիւններ են բերում իրենց վրայ»: Միայն հաւատացեալը չի որը ազդում է իր մեղքերից, այլ դրանք նաեւ վիրաւորում եւ վնասում են նրա ընտանիքին, ընկերներին, ուրիշ հաւատացեալներին, Քրիստոսի եկեղեցուն, եւ ամենավատը բերում են ամօթ ու անպատուութիւն Տիրոջը անունին (Բ. Թագաւորաց 12:10, 14):

Բայց փառք Աստուծուն որ այս չի պատմութեան վերջը հաւատացեալների համար: Հանգանակը նշում է թէ այս կ'լինի հաւատացեալների վիճակը «մի ժամանակաւոր համար»: Հաւատացեալները կարող են ընկնել, եւ ընկնել շատ խիստ կերպով, սակայն նրանց անկումը կ'լինի մասնակի ու ժամանակաւոր, եւ ոչ լիովին ու վերջնական (Ուէստմինստըրը Հաւատոյ Հանգանակ 17.1): Աստուծոյ շնորհքն ու խրատանքը կ'իրագործի իր նպատակը՝ առաջնորդելով հաւատացեալին դէպի իսկական զոջման, խոստովանութեան, ու ապաշխարութեան (Մաղմոս 94:12-14, Առակաց 24:16, Բ. Կորնթացիս 7:9-11): Այս տեղի ունեցաւ Դաւիթի կեանքում (Բ. Թագաւորաց 12:13, Մաղմոս 32, 38, 51):

Ի՞նչն էր Յուդայի եւ Պետրոսի Քրիստոսին մատնելու տարբերութիւնը: Թէպէտ Յուդան դաւանել էր լինել մի հաւատացեալ, սակայն նա երբէք մի հաւատացեալ չէր (Մատթէոս 26:24, Յովհաննէս 17:12): Յուդայի զոջումը մի աշխարհային ապաշխարութիւն էր՝ որը պատճառեց նրա ինքնասպանութիւնը (Մատթէոս 27:3-5): Միւս ձեռքում, Պետրոսի զոջումը իսկական էր, մի աստուածային ապաշխարութիւն, յառաջացած Սուրբ Հոգովը, քանի որ Տէրը նրան ասել էր որ աղօթել էր նրա համար՝ խնդրելով Հօրը որ պահպանէ նրա հաւատքը (Ղուկաս 22:31-32, Յովհաննէս 17:9-12): Սա մի մեծ խոստում էր որը Տէրը տւեց Պետրոսին, եւ որը Նա տալիս է մեզ բոլորիս, Իր ժողովուրդը: Քրիստոսը շարունակաբար բարեխօսում է մեզ համար՝ խնդրելով Հօրը որ տայ մեզ բոլոր այն ինչ որ մենք պէտք ունենք յարատելու հաւատքի մէջ (Հռովմայեցիս 8:34-39):

Որպէս ճշմարիտ հաւատացեալներ մենք կարող ենք ընկնել շատ մեղքերի մէջ, կարելի է որ անգամներ դժարութիւն ունենալ վստահելու եւ յուսալու Աստուծուն, եւ կարող ենք նոյնիսկ ընկնել լուրջ եւ սարսափելի մեղքերի մէջ, այսուհանդերձ մեր հաւատքը մշտապէս չի յաղթահարւի կասկածիցը, եւ մենք լիովին կամ վերջնականապէս շնորհքի վիճակիցը չենք ընկնի, այլ անշուշտ կ'յարատեն մինչեւ վերջը, քանի որ «(Քրիստոսն) բոլորովին կարող է փրկել նրանց որ Նրանով մօտենում են Աստուծուն, որովհետեւ միշտ կենդանի է որ նրանց համար բարեխօսութիւն անէ» (Եբրայեցիս 7:25):